

891.99

U-35

14 FEB 2011

Հասցեարկային քեղացի և Գաղափարացի

891542-3

Ս-34

ՄԱՐԳԱՐԻՏ



ՊԵՐԱՇԻՆ ԶԵՅԱՆՍԱՐԻ
ՀԱՆՐԱՊ ԶԱՐԶԵ
ՄԱՐԳԱՐԻՏ
ՏՈՒՐԱՆ ԵԱԶԱՐԵԱՆԻՏ
18 ՆՈՎԵՐ 1918 Ք. ԳԻՆԵՍ.

1105 83301

Հրատարակութիւն բժշկական և նախասարգեան

1105 1111 83
W. B.

891.99
5-35
my

ՄԱՐԳԱՐԻՏ

(Մարգարիտ Պայազասեան-Նախասարգեան)

„ՁՈՂԻԿԻ ԴԱՐՁԸ ՀԱՅՐԵՆԻՔ“

(Վեպիկ թուրքահայ կեանքից)

1667



Թ Ի Ն Լ Ի Ս

Ներդրաչարժ տպ. Ա. Մ. Թառումեանց. Բարսեղյա փ. № 2.
1908

25 JUN 2013

42.500/1

3044



Mary Smith

Հրեականաց շարժում դասուած՝ Տ. Մարգարիս Պայագասեան-Նաուասարգեանի վէպիկր «Ճողիկի դարձը հայրենիք» լայն եմ ընծայում այսօր, իբրեւ թիւքահայ կեանքի ներկայ ժամանակի շրջանին պատեր մի գրուած։ Թո՛ղ սա լինի սրբազան խունկ, նուիրուած հանգուցեալի անմահ եւ սուրբ յիշատակին։

Կարն ապրեցաւ «Ճողիկի» եւ այլ վէպերի հեղինակը, բայց ինչ որ գրեց, — գրեց փայլուն տաղանդով, «*հո, երանական նրբութեանք եւ դէպի հայրենիք սածած կրակոս անասնուան սիրով*», ուսի եւ համոզուած եմ, որ հայ գրականութեան ուշիմ եւ անաչառ քննադատ պատմագիրը՝ իւր գործի ամենապատուաւոր էջերից մէկը նորան կրնուիլ։

Տ. Մարգարիս Պայագասեան - Նաուասարգեանը, սոսկ «Մարգարիտ» ստորագրութեամբ, իւր վէպերը զետեղում էր «Արձագանքի» մէջ, որից (1896 թ., № 2) եւ արտասպում ենք ներկայ վէպը, կցելով նորան, որպէս յառաջաբան, «Արձագանքի» տաղանդաւոր աշխատակից հանգուցեալ Ս. Հախումեանի «Արձագանքում» (1896 թ. ապրիլի 5, № 38) տպած մանագոյծը։

ԲԺՇԿԱԳԵՏ Բ. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ

Յաւոք սրտի յայտնում եմք, որ այսօր, հոգին է
յանձնուած մեր աշխատակից Մարգարիտ Պալազաճեան-
Նաւասարդեանի մարմինը, որ երկարատեւ ծանր հիւան-
դութիւնից վախճանուեց Թիֆլիսում ապրիլի 2-ին, 38
ամեայ հասակում:

(Արձագանքի խմբագրութիւն)

† ՄԱՐԴԱՐԻՏ ՊԱԶԱԶԱՃԵԱՆ-ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

Թաղում ենք մենք, միայն թաղում ենք: Հայկա-
կան աղքատիկ զբաղանութեան անդաստանի վրայ երե-
ւացող ամեն մի պայծառ ծաղիկ թառամում է, չորա-
նում է գեռ բոլոր կոկոնները չբացած: Արևի ազնիւ հո-
գը, որ կենսատու է այդ սրտնչիւրի ծաղիկներին՝ գիտէ
որ մարդիկ չափազանց անզգայ են, չափազանց կոյր են,
ուստի շուտով իւր ծոցն է առնում իւր պատուական
ստեղծագործութիւնները:

Այդ հոգին է յանձնվում այսօր այն պատուական
Մարգարիտը, որ մանուշակի համեստութեամբ դալար
թուփերի տակ էր ծածկում իւր համեստութիւնը և ըն-
թերցողը նրա ոգին էր միայն տեսնում «Արձագանքի» էջե-
րում, այն տաղանդով, հոգեբանական նրբութեամբ, դէ-
պի հայրենիքը տածած կրակոտ անսահման սիրով, խաղաղ
վշտով ի վեպիկների և պատկերների մէջ, որոնք կրու-
էին «Մարգարիտ» ստորագրութիւնը:

«Շողիկի հայրենիք վերագրուեալը» վէպիլը (տե՛ս Արձագանք 1396 թ., № 2) Մարգարիտի վերջին աղետաբեր ողբն էր, նրա՝ հայրենիքի սիրով և նրա թշուառ որդոց վշտով տոչորուած սրտով վերջին հառաչն էր, որ այնքան ջերմ արտասուքներ հոսեցրաւ զգայուն ընթերցողի աչքերից և այսօր Շողիկի վշտով տանջուած Մարգարիտը ինքն է վերագրուեալ իւր յաւիտենական հայրենիքը, մինչդեռ ինքը Շողիկը՝ նրա գերեզմանի վրայ ողբում է «Աստուծո՛ւ հրեշտակ խանութին»։ Ի՜նչ ծանր, ինչ սրտամաշ վիշտ։ «Արքայած Շողիկն այսօր այրող արտասուքների միջով հազիւ է կարողանում արտասանել «դուրբան ըլլամ հոգուդ, խանճմ։ ժըր դարդ էլ ո՞վ կը հարցու»...

Նրեակայիր քեզ նրա ներքին բոլոր բովանդակութիւնը, այն վիշտը, որ համակել է ինձ՝ այդ տեսարանին ներկայ եղողիս, այն մինչև կրօնի վեհութեանը հասնող զգացմունքը, եթերից աւելի մաքուր սքանչացումն ու յարգանքը, որ ես զգում էի զէպի գրչի այդ վաղաթառամ տաղանդը, զէպի այդ մարմնացած իդէալը և կը համկանաս, թէ ինչո՞ւ գրիչը կասում է և այս ծանր վայրկեանին ևս չեմ կարողանում պատմել քեզ մանրամասն, թէ ո՞վ էր այն Մարգարիտը, որ կարճ ժամանակում իւր սքանչելի վէպերով այնքան սրտեր և մտքեր գրաւեց զէպի ինքը՝ ընթերցողին միշտ անյայտ մնալով։ Բայց իմ վրայ, իբրև «Արձագանքի» աշխատակիցներից ամենամօտ ծանօթի վրայ է ընկնում այդ տխուր պարտականութիւնը, որ ես կըկատարեմ հանգուցեալի մանրամասն կենսագրութիւնը և նորից ուշի ուշով ուսումնասիրելուց յետոյ *)։

*) Ս. Հախումեանը՝ Փարիզից, երբ խմբագրում և հրատարակում էր այնտեղ իւր ժամանակի ամսագիրը, քանիցս նամակներով թախանձագին խնդրեց ինձ ուղարկել իրան Մարգարիտի

Բայց անշուշտ ընթերցողը չգիտէ թէ Մարգարիտը, որ 38 տարեկան հասակում գերեզման է իջնում, մեր աղքատիկ զրական անգաստանի այն մշակներից չէր, որոնք միայն ծանօթ են իրենց չընկալատող նեղ շրջանին, նեղ կեանքին, այլ նա չընկալատող էր Շվեյցարիայի Ժնևի համալսարանի ամբողջ դասընթացին և նոյն քաղաքի ու Փարիզու միւս համալսարանների մի քանի ֆակուլտետներում կատարելագործած իւր ուսումը։ Նւա՜հ զրական գիտութեամբ օժտուած այդ պատուական կինն էր, որ իւր ազգի սիրոյն և նրա գրականութեանը և նրա վշտերն ու ուրախութիւններն այնքան տաղանդով պատկերացնում էր իւր վէպիկների մէջ հեռու մնալով փառքից, ժողովրդականութիւն վայելելու ձգտումից, իւր դիպումները հրապարակ հանելուց։

Նւ այդ աննման տաղանդի մէջ միայն գիտութիւնը չէր, որ սլարփակվում էր և փայլում. նա բարի էր աւելի քան ինքը բարութիւնը, առաքինի քան ինքն առաքինութիւնը, քրիստոնեայ—աւետարանի աղախին և գիտութեան ու մտքի Մարգարիտն։

Հանգիստ ոսկրներիդ, աղնիւ Մարգարիտ. դեռ ոչ մի ճակատի վրայ չէ կաթել այնքան ջերմ արտասուք, որքան քո ճակատի վրայ կաթում է քո փայփայած, սնած, սիրած ու խնամած Շողիկների աչքերից. դա ապացոյց է, որ քո հոգին ու տաղանդը կենդանի են և պիտի լինեն լուսով լուսաւորեն շատ հայ կանանց սրտեր և մտքեր։

Ս. ՀԱՄԻՈՒՄԵԱՆ

կենսագրական դժերը և նրա գրածները, բայց ես, ի նկատի ունենալով Մարգարիտի անսահման համեստութիւնը, ինձ իսկ այսօր անհասկանալի հոգեբանութեամբ, յամառաբար միշտ մերժեցի ազնուատելու Ս. Հախումեանի դիմումները։

Հրատարակիչ

Շողիկի վերադարձը հայրենիք

(Իրականից)

I

Արեգակը բաւականին բարձր էր կանգնած կապոյտ երկնակամարի վրայ՝ հեղեղատելով բնութիւնը ոսկեղօծ լուսով. դաշտերը տեղտեղ դեռ ծածկուած էին եղեամի սպիտակ շղարշով: Հարաւու՛ւ նշմարոււմ էին ուռս-տաճկական սահմանադիւրի վրայ գտնուած Ղարաուրդանի խրճիթները, իսկ հորիզոնը պատած էր ձիւնակատար լեռներով:

Ճանապարհի վրայ նստած էին մի խումբ մշեցի պանդուխտներ և առանձնակի, քարի վրայ՝ մի հասակն առած մարդ և մի երիտասարդ կին, որ ամբողջ մարմնով զոգում էր: Ցնցոտի դարձած կապոյտ դաղաքի անթարին բոլորովին չէր պաշտպանոււմ ցրտից նրա նիհարած մարմինը, իսկ ծակծկոտուած սօլերից երևում էին նրա համարեա մերկ ոտները:

Երիտասարդ կինը Մշու Չ. գիւղի յայտնի ուշադրոյեանց Մազոյի հարս գեղանի Զողիկն էր, բայց այս երկու տարուայ չարքաշ կեանքը

պանդխտութեան մէջ, իւր դաւակաց կարօտը, ախ ու վախով, անքուն աչքերով լուսացրած գիշերները, մի խօսքով՝ քաղցը, ցուրտը, դարդերը ձեռք ձեռքի էին տուել, որ չքնադ Չոզիկին կարճ ժամանակում վերափոխեն, այլանդակեն և նախկին Չոզիկի ուրւականը դարձնեն...

Հասակաւոր մարդը ինքն Մաղօն էր, Չոզիկի «կեսայրը», որ երկու տարի պանդխտութեան մէջ մնալուց յետոյ Կովկասի քաղաքներից մէկում, ուր ինքը մշակութիւն էր անում, իւր հարսը լուացք, վերադառնում էր տուն՝ մէկը իւր ծերունի կնոջ կողքին վերջին շունչն աւանդելու համար, իսկ միւսը, որի ամուսինը հինգ տարի առաջ սպանուել էր քրդերից, իւր որբիկների կարօտն առնելու:

— Հարս, ես քեզ շատի մնացիր, գարնան տրի. հիմա ցրտերն ընկել են, շատ կընեղանաս, գիմեց Մաղօն իւր հարսին տեսնելով թէ նա ինչպէս ձեռքերը կռնատակին դողդողում է:

— Եւր թէ այս ձմեռ իմ Տիգրան, իմ Փարֆուր չտեսնեմ, ես կըմեռնեմ, ասեց Չոզիկը, աւելի ևս կծկուելով և մի փոքր լուծիւնից յետոյ աւելացրեց՝ — Էհ, բան չկայ, արեւը շուտով կըտաքանայ, օդն անուշ է:

— Ի՞նչ էք նստել, երթանք, ասեց մէկը խմբի միջից:

Ոչ ոք տեղից չշարժուեց, միայն մի քանի-

սի կրծքից խոր հառաչանք դուրս եկաւ՝ «տունը քանդուի անօրէնի, սիրտ կայ որ երթանք»:

Փիզիքական յոգնութիւնից չէր, որ պանդուխտները նստել էին և երեսներին տրտմութեան քող քաշել. երկու ժամ հազիւ լինէր, ինչ նրանք դուրս էին եկել իջևանից, իսկ երկու ժամուայ ճանապարհը մշեցու համար մի քայլ անել է: Հոգեկան յուզմունքն էր, որ նրանց ոտները կաշկանդել էր. նրանք արդէն մօտենում էին տաճկաց սահմանին...

Երկար տարիներ պանդխտութեան տաժանելի կեանքը քաշելուց յետոյ, մշեցին հայրենիք է վերադառնում, մէջքին կապած իւր բոլոր ունեցած-չունեցածը, որ կազմում է մի հնամաշ բաղդաղի թաշկինակ, որեւէ զթառատ տիկնոջ պարզե, և մի քանի գոգ շիթ իւր սիրելի կնոջ ու զաւակների համար:

Հայրենիք վերադառնալիս մեր մշեցին բոլորովին փոխւում է. նա նման չէ այն շուարած, մոլորած, մէջքը ծռած մշակին, որ սովորաբար տեսնում ենք մեծ քաղաքների փողոցներում:

Այն յոյսը, որ նա մի երկու երեք շաբաթից յետոյ կըգրկախառնուի իւր սրտին այնքան թանգ էակների հետ. կըտեսնի այնչափ կարօտած հայրենի երկիրը, նրա սարն ու ձորը, դաշտն ու ջուրը, — մի կախարդական ազդեցութիւն է անում մշեցու վրայ:

Նրա կորանցած մէջքը ուղղվում է կուրծքը լայնանում, մարած աչքերը փայլ են ստանում, երեսը խոհուն արտայայտութիւն: Նա ընթանում է մեծ և հաստատ քայլերով, իւր ընկերների հետ խօսում է բարձրաձայն և ոգևորուած, ձորեր ու սարեր նա թռչկոտալով ու երգելով է անցնում: Նա առ ժամանակ մոռանում է հայրենիքում քաշած և քաշելիք տանջանքները. նրա մտքում մի պատկեր միայն կայ, այդ իւր խրդճուկ օջաղն է և իւր սիրելիների դէմքը:

Բայց այդ ոգևորութիւնը տեւում է մինչև Ղարս, որտեղ մշեցին անցադիր է առնում տաճկական հիւպատոսից, որքան ուրախ մտնում է նա այդ քաղաքը, նոյնքան տխուր դուրս է գալիս այնտեղից:

Նա այնտեղ նորից սկսում է դգալ, տաճկաց կտուավարութեան սոսկալի ճնշումն: Պանդուխտները ժամերով, օրերով վզները ծած, աղաչանք - սղաղատանք անելով անցադրեր են խնդրում: Այդտեղ նրանք լսում են նորեկ հայրենակիցներից, թէ զուր է նրանց չարչարանքը, զուր են վերադառնում հայրենիք, նրանց տները աւերել են. և կտրւում է հայրենիք վերադարձող մշեցու յոյսը, թէ նա մի օր իւր գիւղը կը հասնի:

Եւ նրանք Ղարսումը մի օր մնալու փոխարէն, մնում են եօթ-տաս օր, տատա-

նուելով թէ արդեօր պնան, թէ մնան դարձեալ դառը պանդխտութեան մէջ: Բայց այդ զժողրի միջից մշեցուն իւր տունն է կոչում մի ալեղարդ զլուխ, կամ մի գեղածիծաղ մանկան երես և նա տխուր ու յուսահատ սրտով, թուլացած ծնկներով քայլերն ուղղում է դէպի հայրենիք տանող ճանապարհը...

Նա սկսում է շուտ-շուտ իջնանել. կանուխ լուսարացին չէ նա ճանապարհ ընկնում և քանի մօտենում է սահմանին, այնքան աւելի է գանդաղեցնում իւր քայլերը, իսկ երբ նրա աչքին երևում է սահմանագլուխը, ուժասպառ նստում է ճանապարհի եզրին:

II

— Էհ, ելէք տղերք, մինչև երբ նստենք, ասեց այս անգամ Մաղօն, տեղիցը վերկենալով:

— Ելէք, ելէք, կրկնեցին քանի մի ձայն միասին, նոյնպէս տեղներիցը կանգնելով:

Եւ պանդուխտները անվստահ քայլերով առաջ գնացին:

— Ես չկարծեմ, որ մեր երկիրը չաւանայ, ասեց Մաղօն, զլուխը շարժելով:

— Էհ, այնքան որ մեզ թողնեն մեր երկրում միւռնենք, նրա հողին արժանանանք, առարկեց մի ծերունի, որ յիշաւի վերադառնում էր

հայրենիք միմիայն իւր ոսկերքը հայրենեաց հողին յանձնելու համար:

Այս տեսակ տխուր և յուսակտուր խօսակցութիւն անելով, պանդուխտները հասան սահմանագլուխը:

— Ախ, ես մեռնէի, կրկին ձեր երեսը չտեսնայի, շնչաց ճողիկը, տեսնելով թուրք պաշտօնեաներին իրանց կարմիր ֆասերով ու կապոյտ, կարճ բաճկոններով, որոնց դեղին կոճակները դեռ հեռուից փայլեցին՝ ճողիկի սրտի համար մի անախորժ փայլով:

Ճողիկի հայեացքը կարմիր ֆասերից ընկաւ ուղղակի սահմանագլխի սև ու սպիտակ սիւններին. որոնք նրա վրայ կախազանի տպաւորութիւն գործեցին:

Բայց ահա օդումը թնդաց մի կոպիտ հրամայական ձայն՝ «դուրուն» (կանգնեցէք):

Պանդուխտները կանգ առան:

Երեք թուրք, որ կանգնած էին սահմանատան առաջ, մօտեցան նրանց:

Մշեցիք մինչև գետին գլուխ տուին:

Թուրքերից մէկն անցաւ աջ, միւսը ձախ, մերթ ազահութեամբ նայելով մշեցոց մէջքի բեռին, մերթ վերաւորական հայեացքը ձգելով ճողիկի վրայ, որ միակ կինն էր ամբողջ խմբի մէջ և կիսակենդան կանգնած էր իւր սկեսայրի յետին: Իսկ երրորդը մի հաստարեղ,

որ աւելի գիշատիչ զազանի էր նմանում, քան մարդու, մօտեցաւ խմբին և իւր արիւնալի աչքերը պտրտեցնելով նրանց վրայ գոռաց՝

— Ո՛ւր էիք ջահանգամուհի մեր երկրից:

— Աղան ապրաց կենայ, գնացել էինք մշակութեան, որ մեր ճժեր սոված չմեռնեն, պատասխանեցին, կրկին գլուխ տալով:

— Ձեր եօլ թեսքէրէսին:

Հայերն անհամարձակ մեկնեցին իրանց անցագրերը, բացի ճողիկը, որ չունէր անցագիր: Նախ քան թղթերը վերցնելը, թուրքը հրամայեց բոլոր խմբին նստել, իսկ ճողիկին — նրանցից բաժանուել:

Մշեցիք անմիջապէս նստեցին, իսկ ճողիկը հեռացաւ նրանցից և կանգնեց մեկուսի, դատապարտեալի պէս ձեռքերը կրծքին խաչած և իւր վրայ զգալով գապթիանների անամօթ հայեացքները:

Թուրք ծառայողը հաւաքեց անցագրերը, յետոյ ցուցմատով համարեց մի առ մի իւր առջև չորած հայերին ու գնաց դէպի սահմանատուն, որ անցագրերը իւր մեծաւորին ներկայացնի:

Մնացած երկու զապթիանները իրար աչքով արին, մէկն իսկոյն հեռացաւ, իսկ միւսը մօտեցաւ մշեցոց զրպաններն ու ծոցերը խուզարկելու:

Նա հանում էր փողի քսակները, մատնե-
րով շոշափում. եթէ նկատում էր թէ քսակի
մէջ բացի մի-երկու զրօշից ոչինչ չկայ, յետ էր
դարձնում տիրոջը, իսկ եթէ շատից-քչից բան
էր գտնում, իսկոյն բանում էր քսակի բերանը,
շուռ ու մուռ տալիս. փողերը հանում և ամե-
նայն հանգստութեամբ իւր զրպանը դնում:

Հազիւ դա իւր պաշտօնը կատարեց,—հե-
ռացաւ, երկրորդ զապթիան ուղղեց իւր քայ-
լերը դէպի խումբը:

Հայերը դուշակելով, որ դա էլ պէտք է իւր
պաշտօնը կատարի, փողերի քսակները հա-
նեցին գետինը ձգեցին ու վրան կանգնեցին:

Յիրաւի, թուրքը խուզարկելու էր եկել,
բայց առաջ քան գործողութիւնն սկսելը, հարց
ու փորձ արեց թէ մի՞նչ գուցէ խուզարկող զապ-
թիան մի բան էր իւրացրել նրանցից:

—«Ոչ», եղաւ պատասխանը:

—ձմարիան ասացէք, եթէ մի բան վեր-
ցրել է, նա փաղիշայի հրամանով մեծ պատժի
կ'ենթարկուի, շարունակեց թուրքը՝ փոքրիկ ա-
ղուէսի աչքերն արագ-արագ շարժելով:

Հայերի պատասխանը դարձեալ բացասա-
կան եղաւ. դարեւոր փորձերով նրանք քաջ դի-
տէին, որ Տաճկաստանում ձմարտութիւն ա-
սողն է պատժուում և ոչ յանցանք գործողը:

Թուրքը տեսաւ, որ հայի բերանում լօրի

կըթըջուի, սկսեց իւր խուզարկութիւնը—«յա»
նուն օրինաց», բայց նրանց զրպաններում բա-
ցի զրչադանակներից և մի քանի կտոր բրդէ
թելերից ու փալասի կտորներից աւելի ոչինչ
չգտաւ, ուստի շատացաւ նրանով, որ զրչադա-
նակներից աւելի պէտքականները իւր զրպանը
դրեց ու գնաց:

Անցաւ բաւականին ժամանակ, հայերը ան-
հանգիստ սպասում էին նորանոր գործողու-
թիւնների: Վերջապէս գլխագիր հաւաքող պաշ-
տօնեան երեաց. կանչեց պանդուխտներին և
յայտնեց թէ նրանց եօլ-թեսքէրէսիքը մի զրօշի
արժէք չունին, չնայելով որ Ղարսում իրանց—
տաճկաց հիւպատոսն է տուել և թէ բացա-
տրութիւն ստանալու համար մարդագլուխ յի-
սուն կոպէկ պէտք է վճարել, որ Ղարս հեռա-
գիր տրուի:

Մշեցիք օրհնեցին պաշտօնեային, որ նա
այնքան բարի է, որ այդպէս մի հնար գտաւ և
իրանց չվերադարձրեց Ղարս, ինչպէս սպառնա-
ցել էր և դողդոջուն ձեռքերով քսակները բա-
ցին ու ունեցողը չունեցողի փոխարէն տալով,
պահանջած գումարը լրացրին:

Փողն առնելուց յետոյ, պաշտօնեան հրա-
մայեց զապթիաներին, որ մշեցոց տանին կող-
պեն մի սենեակում, մինչև հեռագրի պատաս-
խանը ստացուիլը, իսկ Ղողիկին երկու զապ-



թիայի հսկողութեան ներքոյ տանեն յանձնեն ողութի զաստաւայի մեծաւորին, որպէս անգլիսացիի փախստականի:

Երկու զապթիան մօտեցան, որ Զողիկին անջատեն խմբից: Զողիկը սկեսրայրի թեիցը բռնեց.—Աման, ինձ սպանի ու մի թողնի, որ տանեն, մոռանալով, որ իւր սկեսրայրը նոյնքան անճար է, որքան և ինքը:

—Գնա, գնա ոտներն ընկի, վրադ-վրադ ասաց շուարած Մադօն, հարսին հրելով առաջ և ինքն էլ նրան հետեւով:

Մադօն և իւր հարսը ընկան թուրքի ոտները:

—Աղա, քեզի դուրբան, դա մի անտէր կին է, ուր գնայ, չի իմացել, որ եօլ թեսքերէսի է հարկաւոր. առաջ կինարմատից չէիք պահանջում, աղերսանքով ասաց Մադօն:

—«Օլմէս». այդ առաջ էր, այժմ այդպէս չէ, պատասխանեց պաշտօնեան բարկացած: Ահա և ինքը մեծաւորը, ասաց նա, ցոյց տալով հեռուից եկող մէկի վրայ:

Մադօն և Զողիկը վեր կացան գնացին նոր մեծաւորին ընդ առաջ: Դա մի փոքրիկ նիհար մարդ էր, երկար ծուռը քթով և նշաձև մաշուած աչքերով: Նա նոր էր զարթնել և տանից նոր էր դուրս եկել զիւսնատուն:

Մադօն և Զողիկը զրա ոտներն էլ ընկան,

բայց Մադօն գուշակելով, որ լոկ աղերսը քիչ կ'օգնի, հանեց մի մեծ արծաթէ դրամ մէջիդէի, որ իւր բոլոր հոգեպահուստն էր և դրեց պաշտօնեայի բուռը:

Նա բոլորովին չվիրաւորուեց Մադօյի այդ յանդուգն վարմունքից, այլ հանդարտութեամբ իւր փոքրիկ սև բռնում դրած արծաթի վրայ նայեց և նոյնքան հանդարտութեամբ յետ տալով: Հատ մեզմ ձայնով ասեց.

—«Օղուլ», որ ոսկի էլ տաս, ես չեմ կարող այդ անել. ես փաղիշայի պաշտօնեայ եմ, ինձ հրամայուած է որ ոչ ոքի առանց անցադրի չըթողնեմ մեր երկիրը ոտք կոխի. եթէ ես այդ կնոջը, օրէնքի հակառակ, թողնեմ—իմ ձեռքերս այ, այս տեղից կըկտրեն, ցոյց տալով ձեռքերի կտրելու ճիշտ տեղը: Ոսկի էլ որ տաս, ես ոչինչ չեմ կարող անել, հասկանում ես, «օղուլ», ոսկի փող:

«Ոսկի» բառի վրայ, պաշտօնեան առանձին շեշտեց:

Մադօն չհասկացաւ այդ շեշտի նշանակութիւնը. միամիտ մշեցին, չնայելով այնքան դառն փորձերին, դեռ հաւատում էր, թէ մարդ է, կարելի է անկաշառ մէկն է, ով գիտէ և վերջապէս օրէնքի անունը Մադօյին պատկառանք ներշնչեց:

—Աղա, ապա կինարմատ է, մենակ ո՞նց գնայ

այդքան ճանապարհը, փորձեց նորից աղաչել Մազօն:

— Օղուլ, ասում եմ, որ մի գեղին ոսկի եթէ տաս, ես օրէնքի դէմ չեմ կարող գնալ, թէն տունս մի ոսկու էլ կարօտ է, կրկնեց մեծաւորը, որի ձայնում արգէն բարկութիւն էր լըսւում:

Մազօն այս անգամ էլ չհասկացաւ, թէն հասկանար էլ, ճար չունէր նրան գոհացումն տալու, նրա եղած-չեղածը այդ մէջիդիէն էր:

Այս անգամ ձողիկը փորձեց աղաչել, բայց մեծաւորը սաստիկ գայրացաւ և հրամայեց զապթիաներին, որ Մազօյին մտրակի հարուածներով տանեն խմբի հետ փակեն, իսկ ձողիկի վրայ մի զննողական հայեացք զցելուց յետոյ, հրամայեց տանեն, իբրեւ փախստականի ուսաց մեծաւորին յանձնեն:

Մազօն ուզեց վերադառնալ, հարսի հետ գնալ, բայց զապթիայի վճռական «օլմէսը» և բռնցի հարուածը անջատեց նրան ձողիկից:

Մազօն այլ ես չհամարձակուեց ձայն հանել, նրան տարան միւսների հետ կողպեցին մի տան մէջ:

Տաճիկ պաշտօնեան նրանց հեռանալուց, ատամների արանքովը շշնջաց՝ «գեաուրլէր»:

Շողիկին յանձնեցին գիւղի տանուտէրին, որ մի յոյն էր, որպէսզի մի քանի օր պահի նր-

րան, մինչև որ Կովկաս գնացող մշեցիք հանդիպեն — նրանց յանձնի:

Տանուտէրն ընդունելով ձողիկին, իբրեւ փախստականի և վախենալով որ չլինի թէ դարձեալ փախչի, — բարւոք համարեց զցել նրան մի խարխուլ տուն և դուռն ամուր կողպել:

ձողիկի յուսահատութեանը սահման չկար. նա երկար ժամանակ ապշած կանգնած էր միտայնութեան մէջ, այդ ցուբտ տեղում:

Երեկոյեան նախրի ձայնը միայն նրան ուշքի բերեց. ձողիկը յիշեց իրանց գիւղը, որ նա յոյս ունէր մի տասն օրից յետոյ տեսնել ու սկսեց դառնութեամբ լալ:

Ազգամոջին մութը շուտով վրայ հասաւ. լուսոյ այն միակ ցոլը, որ պատի ճարից ներս էր գալիս, անհետացաւ և ձողիկի սրտի մէջ սկսեց վախ ընկնել. նրա շորս կողմը դժողքի պէս սև էր: ձողիկը մօտեցաւ դռանը, մի քանի ժամանակ ականջ դրեց, կարծելով թէ ճրագ կը բերեն, բայց ոչ որ չէր գալիս. կամաց կամաց դուրսը ամեն շարժողութիւն, ամեն ձայն դադարեց: Գիւղը քնում էր: ձողիկը յուսահատութիւնից վճռեց դուրս գալ իւր բանտից. նա ուժգին քաշեց դուռը, դուռը մի քիչ առաջ եկաւ, բայց չբացուեց. նա դռան ճեղքով երկու մատը անցրեց, կարծելով թէ կարող է բանալ. բայց դարհուրելով տեսաւ քաշ արած մի անագին կողպէք:

Չողիկի յուսահատութիւնը իւր պագաթնակէտին հասաւ. երկիւղը պատեց նրա ամբողջ հոգին, մագերը փշաքաղուեցին: Նա զգում էր, որ եթէ այդ տեղից դուրս չգայ, կարող է խեղադարուել. նա մէկ էլ քաշեց դուռը, յուսալով թէ խախուտ դուռը կը կոտորուի, բայց դուռը դիմադրեց նրա նուազած ոյժերին և Չողիկը զըլխին ու ծնկներին տալով ուժասպառ ճկուեց դռան տակին:

Նրա վերին աստիճանի լարուած նեարդերը տեղի տուին ջլատման և Չողիկը ընկաւ մի տեսակ թմրութեան մէջ:

Մկների վազվառիւր միայն մերթ ընդ մերթ արթնութեան էին բերում Չողիկին, նրա սիրտը տրոփել էին տալիս ու նա սարսափած, տչքերն ու ականջները լարած մի քանի բոպէ ականջ էր դնում և յետոյ ինքն իրան հանգստացնելով ասում էր՝ «խաշապաշտի երկրում եմ, ինձ վնաս չի գալ», և դարձեալ ընկնում էր թմրութեան մէջ:

Մի քանի անգամ Չողիկի յոգնած կոպերը իջան, նա ննջեց, բայց սաստիկ ցուրտը թոյլ չէր տալի որ քնի և նա, ատամները միմեանց տալով, աւելի և աւելի էր կծկւում. վերջապէս լուսադէմին նրա գլուխը կրծքին խոնարհուեց և ինքը զլորուեց խոնաւ գետնի վրայ ու քնեց... Չողիկն արդէն իւր գիւղումն էր, կրակ էր ա-

նում որ քաղցրիկ ճժերի համար կաթ տաքացնի, երբ մի հարուած զարթեցրեց նրան: Տանուտէրն էր, որ դուռը բանալիս դիպցրեց Չողիկին:

Խեղճ կինը աչքերը տրորելով վերկացաւ տեղից: Տանուտէրի յետեից մտաւ մի հայ, որ հրաւիրեց Չողիկին հետեւել իրան:

—Ա՛խ, մեռնեմ Աստուծոյ գորութեան, ես կարծում էի թէ այս գիշերը անշուշտ կը մեռնեմ և այլ ես հայի ոչ երես կը տեսնեմ, ոչ լեզու կը լսեմ, ասեց Չողիկը, աչքերը դէպի երկինք բարձրացնելով և գնաց այդ հայի տունը, որ միակ հայն էր այդ գիւղում:

Ներս մտնելուց նա մէկ էլ փառք տուեց Աստծուն:

—Քոյրս, կըմնաս մեզ մօտ Աստծու հիւր, տեսնենք ինչպէս ենք կամ դէսը կամ դէնը ճանապարհ գցում քեզ, ասեց հայր և պատուիրեց իւր կնոջը, որ խնամք տանի Չողիկին:

III

Օրը թերւում էր դէպի երեկոյ: Արեգակը իւր վերջին ճառագայթներով լուսաւորում էր բնութիւնը կարմրագոյն լուսով:

Բաղէշից դէպի հարաւ-արեւմուտք՝ սարերի միջով, ոլոր-մոլոր նեղ շաւղով դնում էին մի

կին և մի մարդ։ Կինը Չողիկն էր։ Նա մի ամբողջ շաբաթ ծայրայեղ յուսահատութեան մէջ սպասում էր թէ որտեղ որ է իւր սկեսրայրը կը գայ կըտանի դէպի հայրենիք, բայց... ո՞ր գիտէ, ո՞ր դանլի դարայի (արեան կիրճ) մէջ նրան սպանեց քրդի գնդակը։

Այդ օրերը շարունակ գալիս էին պանդուխտները, խումբ-խումբ անցնումսահմանը՝ հայրենիք երթալու։ Այդպիսի մի խմբի մէջ գտնուեց Չողիկի համագիւղացի մի կտրիճ երիտասարդ, որ լսելով նրա անել զրութիւնը, յանձն առաւ սարերի միջով, գաղտուկի անցկացնել Չողիկին և տանել-հասցնել իրանց գիւղը։ Ահա այդ երիտասարդի հետ էր, որ Չողիկը գնում էր։

Ճանապարհորդները, հարկաւոր էր մի բլուր միայն բարձրանային, որ գիւղը տեսնէին։ Չողիկի ոտները բոլորովին մերկ, առանց սօլերի, հագիւ-հագ էին շարժւում քարերի միջով, նա շուտ-շուտ կանգ էր առնում, ոտի տակից մի փուշ հանում և շարունակում ճանապարհը արենլուիկ ոտներով։

— Զո՞ւտ կըհասնինք մեր գիւղը, հարցնում էր նա մէկ-մէկ իւր ուղեկցին։

— Էսա, այս բլուրը որ բարձրանանք, մեր գիւղը կըտեսնենք, արեւը չնստած, մենք տուն կըհասնինք, պատասխանում էր երիտասարդը։

Երիտասարդը սխալուեց. երբ նրանք բլրի

գագաթը բարձրացան, արեւակը արդէն կիսով չափ մայր էր մտել և սարի ստորոտն ու դաշտը ծածկուել էին կապոյտ ստուերով։

— Մեր գիւղը ո՞րն է, հարցրեց Չողիկը, մի խոր հառաչ քաշելով։

— Է՛ն, տեսնում ես, այնտեղ հեռու, որ սպիտակին է տալիս.— էն է, ասեց երիտասարդը, ձեռքը մեկնելով։

Չողիկի երեսը փայլեց և ձեռքով աչքերը հովանաւորելով, նայեց մի քանի վայրկեան, յետոյ ասեց

— Էն մեր գիւղն է, կարծես քարի կոշտեր լինին, շէնքի նմանող այնտեղ բան չկայ։

— Հեռու է, այնպէս է երևում, պատասխանեց երիտասարդը։

Մի քանի րոպէ հանգստութիւն առնելուց յետոյ սկսեցին իջնել դաշտը։

Չողիկն աչքը չէր հեռացնում իւր գիւղից, բայց քանի մօտենում էր, այնքան աւելի քարակոշտերի տպաւորութիւն էր անում այն տեղը, ուր գիւղն էր ենթադրում։

Երբ որ նրանք այնքան մօտեցան, որ ամեն բան պարզ երևում էր, նրանք միաձայն բացականչեցին.

— Վայ, մեր գիւղն ամայացել է։

Չողիկն աչքերը լայն բացած, գունատ, քաբացած կանգնեց, իսկ երիտասարդը, որին ձը-

Ջողիկը հետեւեց նրան, կրկնելով բոլոր ժամանակ՝ «մեր գիւղն ամալացել է, ճժերս կոտորել են. անխ ճժերս, վանխ ճժերս»:

Ջողիկը գլխին տալով «Տրգրան» «Փարֆոր»
աղաղակելով որոնում էր այն տեղը, ուր պէտք
է լինէր իւր օջախը:

Արեղակի վերջին ճառադպրոցն անհետացաւ:

Հողիկը գլխի ծածկուցը պատահոտած, մա-
զերը գլխին ցրուած, կրծքին տալով դուրս ե-
կաւ գիւղից և ընկաւ շրջակայ դաշտերը... «Տիգ-
րան, Փարֆուր, ճժերս, ուր էք»...


Գիշերային սաքսափելի լուսթեան մէջ, դեռ
 երկար ժամանակ ճողիկի գերմարդկային ճիշը
 լսում էր անապատի տարածութեան մէջ. նա
 անդադար կանչում էր՝ Տիգրան, Փարֆուր, յու-
 սալով որ նրանք դեռ կենդանի են և արձագանք
 կըտան իրան... Բայց ոչ, ոչ մի յոյս չունէր նա.
 Նա կանչում էր, որովհետեւ իւր կորած զաւակ-
 ների անուններն էր ուզում միշտ լսել: Ըողիկը
 խելագարուել էր:

Uurquarhs.

(Պայազատեան-Նառասարդեան)

1896 թ. յունւարի 6.





ԳԻՆՆ Է 10 ԿՈՊ.

Դիմել՝

Քժշկապ. Բ. Նստասարդեանի տոաջին Մ. Հի-
ԻԱՆԴԱՆՈՑՈՒՄ (Վօրօնցովի արձանի հանդէպ).

ՀՀ Ազգային գրադարան



NL0343875

42500/I

